ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Նարեկ Ներսեսյան Էդգարի ԱՁ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2024/L-29 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
8	ճտքավոր կոշիկներ	ճտքավոր կոշիկներ	ճտքավոր կոշիկներ	«ՆԱՐԵԿ ՆԵՐՍԵՍՅԱՆ ԷԴԳԱՐԻ» ԱՁ	Խոշոր եղջերավոր անասունի հարթ /առանց նակատի/, սև գույնի, կաշվից՝ մշակված անջրանցիկ ծածկույթով (արգելվում է օգտագործել սպիլոկ կամ խոզի կաշի)։ Կազմված է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճիտքերից, լեզվակից, հիմնական ներդիրից, ներբանից և տակացուից։ Կոշկերեսի և հետնամասի կաշին առնվազն 1.5+/-0.2մմ հաստության, լեզվակից ճտքերին միացող հատվածը 1.5+/-0.2մմ հաստության իսկ ճտքերը ծալվածքով 1.5+/-0.2մմ

					հաստության կաշվից, քթամասը և կրունկամասը կոշտ: Քթամասում և կրունկամասում ներսից միջադրվում են թերմոպլաստ, որն ապահովում է մինչև 50 Ջոուլ էներգիայով հարվածից պաշտպանվածություն: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կապակցված, առնվազն 2.8 մմ հաստության բնական հումքից, պադոշից և կոշիկի համար նախատեսված 1.8մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Կոշիկի երեսամասի ներսի հատվածը մշակվում է 240-245 գրամ մակերեսային խտությամբ 100% բամբակ բաղադրությամբ կտորից: Լեզվակը՝ փակ փականով: Կոշիկի ճտքերի բարձրությունը՝ 23+/-1 սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներսի մասով հիմնական ներդիրից մինչև ճտքի վերին եզրը: Տակացուն՝ միաշերտ, մաշվածադիմացկուն, յուղակայուն ռետինից՝ խիստ արտահայտված պահպանաշերտով: Կոշիկը ոտքին հարմարեցվում է ճտքերի վրա ամրացված մետաղյա փոլակներով անցնող

						կոշկաքուղերով և ներսամասին մշակված երկկողմանի շղթայով: Շղթան ողջ երկայնքով երկկողմանի մշակված է պաշտպանիչ փականներով: Կոշկաքուղերը՝ քիմիական մանրաթելից: Կոշիկի միջադիրը՝ ստելկան, առնվազն 3 մմ հաստության բնական նյութից՝ պադոշից: Կոշիկը տակամասում ունի դրոշմ՝ վրան նշված չափսը: Կոշիկի չափսերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով, պիտակավորված: Պիտակի վրա նշված են՝ տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժան համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Պատվիրատուի պահանջով Մատակարար

					կազմակերպությունը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին լաբորատոր փորձաքննության եզրակացություն՝ տրված ՀՀ հավաստագիր ունեցող լաբորատոր փորձաքննական կենտրոնի կողմից: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: Ճտքավոր կոշիկի նմուշը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Нарек Нерсесян Эдгар ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2024/L-29 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
8	-	-	-	-	-